Արձանագրություն N 3

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.03.2018 թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սողոմոնյան - Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ

Անդամներ՝

Կ. Սիմոնյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Նալբանդյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

Ա. Ավալյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Գ. Մոմջյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող՝

Ն. Կարապետյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ:

1. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը գնահատելու մասին

(Ս.Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկվել են:

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Ա.Սողոմոնյան)

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ ֆինանսների նախարարություն կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղը զբաղեցնող մասնակիցների որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ժամը՝ 10:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք 2-րդ, 6-րդ հարկ ՀՀ մշակույթի նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Ա. Նալբանդյան
		Ա. Ավալյան
		Գ. Մոմջյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան